

**ՍՈՒՍԱՆՆԱ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Բանահրական զիտությունների թեկնածու**

«ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Ծնորհակալ ու կարևոր գործ է ձեռնարկել բանասիրական զիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավելիսա Դոլոխանյանը՝ նվիրապական հայագետների կյանքը և զիտական գործունությունը ներկայացնելով հայ ընթերցողներին «Եվրոպայի հայագետներ» շարքով, որի առաջին գիրքը նվիրված է թեղիքացի նշանավոր հայագետ Ֆելիքս Նեհին: Այն վերնագրված է: «Ֆելիքս Նեհը և բրիստոնեական մագիստրությունը», որում ներկայացված են Նեհ՝ այս թեմային վերաբերվող ութ գործերը:

Թեղիքացի հայագետի աշխատությունները, մասնավորապես «Քրիստոնյա Հայաստանը և իր մագիստրությունը» (1886), «Հայ գրականության մի քանի արժանահիշագրակ հրապարակումները» (1888), թեև նվիրված են հայկական միջնադարյան հոգևոր գրականությանը, այնուամենայնիվ, ինչպես նրա, այնպես էլ մյուս օւգարազմի զիտնականների հետազողությունները բազմաբնույթ հանրագիտական գիտելեկություններ են պարունակում հայագիտության գրաբեր բնագավառների՝ թե՛ լեզվաբանության, թե՛ պատմագրության և թե՛ հայ եկեղեցական մագիստրության մասին:

Ֆ. Նեհ ի մի է թերում ու արժեվորում Եվրոպայում գործող ժամանակի հայագիտական կենդրունների գործունեությունը, կարևորում նրանց վեղը հայագիտության զարգացման ասպարեզում: Ա. Դոլոխանյանը ներկայացնում է Ֆ. Նեհ՝ Եղիշեի, Ռովիաննես Դրախտանկերպու, Գրիգոր Նարեկացու, Մարթեն Ուսիհյեցու, Թովմա Մեծոփեցու, Ղևոնդ Ալիշանի սփեղծագործությունների վերլուծությունները: Նարեկացուն համարելով հայ գրականության զագարը՝ թեղիքացի զիտնականը զբնում է, որ «Մարյան ողբերգությանը» ոչ միայն հայերի, այլև ողջ բրիստոնեական աշխարհի կենսական կարիքների համար է¹, իսկ Ղևոնդ Ալիշանի «Սիսուան» աշխատությունը կարևոր է համարում նվիրացիների համար՝ մասնավորապես նրանում խաչակիրների արշավանքների և Ռուբինյան թագավորության մասին եղած հարուստ գիտելեկությունների համար:

Ա. Դոլոխանյանի երկրորդ հետազորությունը՝ «Մարի Ֆելիքսի Բրոսսեն հայագետ», նվիրված է հայագիտության մեծ երախտավորի ծննդյան 200-ամյակին (2002): Աշխատության առաջին մասում ներկայացվում է Փրանսիացի հայագետի կենսագրությունը: Նրա՝ հայագիտության, վրացագիտության, կովկասագիտության, չինագիտության հարցերին նըլվիրված հետազորությունների թիվը հասնում է 270-ի: Ընդ որում ուշագրավ է, որ զրբի վերջում հետազորության հեղինակը առանձնացրել և կազմել է զիտնականի՝ հայագիտության գրաբեր բնագավառներին վերաբերվող հետազորությունների մագիստրությունը: Բրոսսեն իրականացրել է հայ պատմիչների գրանքերեւ նրկերի Փրանսերեն թարգմանությունը:

¹ Ա. Դոլոխանյան, Ֆելիքս Նեհ և հայ բրիստոնեական մագիստրությունը, Երևան, 2001, լո 68-69:

Դոլոխանյանը Բրոստեհն նվիրված գրքի առաջին զիմում անդրադարձել է հայագետի թարգմանական գործունեությանը, մասնավորապես Թովմա Արծրունու, Սփեսաննոս Օքբյանի, Միհիթր Այրիվանեցու, Ուխտանեսի, Կիրակոս Գանձակեցու, Առաքել Դավիթինեցու երկերի թարգմանությանը: Մ. Բրոստեն գրաղվել է նաև դոմարագիկությամբ և դրա մագիկությամբ:

Բրոստեն 1840 թ. Փրանսերեն և ռուսերեն հրապարակել է Էջմիածնի ձևագրացուցակը: Նա բարձր է գնահարում Էջմիածնի դեր հայ ժողովրդի հոգևոր և քաղաքական կյանքում, ինչպես նաև շեշտում, որ Դայագրանում ամեն ինչ իր վրա կրում է հավաքրի որոշմը²: Բրոստեն իր դպավորություններն ամփոփել է «Էջմիածն-Անի» ճանապարհորդական ուղեգրությունում մանրամասն ներկայացնելով և նկարագրելով Էջմիածնի Մայր Տաճարը, մյուս եկեղեցիները³: Նա ուսումնասիրել է նաև հայկական վանքերի արձանագրությունները, մասնավորապես Դաղպատ-Սանահինի վանքերի:

Բրոստեն հայ պատմիչների երկնի նկարմամբ ցուցաբերել է քննական մովեցում նրանց հաղորդած գեղեցկությունները բաղդատելով բյուզանդական, ասորական, վրացական, արաբական և պարսկական մագիստրության համապարասխան վկայությունների հետ: Եվրոպացի ընթերցողը Մ. Բրոստենի աշխագությունների միջոցով որոշակի պարկերացում կկազմի Դայագրանի միջնադարյան մշակույթի մասին, կծանոթանա հայկական նշանագոր վանքերին, նրանց արձանագրություններին, ճարդարապետությանը, մանրանկարչությանը⁴:

Ա. Դոլոխանյանի «Եվրոպայի հայագետներ» մատենաշարի երրորդ գիրքը նվիրված է Վիկտոր Լանգոլուային, որը մեծ վասրակ ունի հայագիրության ասպարեզում մասնավորապես հետպատճենով հայ գրականության, պարմության, եկեղեցական վավերագրերի, վիմագրության, Դայ Եկեղեցու՝ 19-րդ դարի վիճակի հարցերը: Ա. Դոլոխանյանն իր ուսումնասիրության առաջին մասում անդրադառնում է հայ գրականության Լանգոլուայի գնահատությանը՝ հենքելով Միհիթրայան միարանության պարմության մասին ֆրանսիացի հայագետի գրած հետպատճենության վրա⁵:

Լանգոլուայի՝ Կիլիկիայի մասին ուսումնասիրությունները ներկայացվում են գրքի երկրորդ մասում: Նապոլեոն Երրորդ կայսեր հանձնարարությամբ Վ. Լանգոլուան այցելում է Կիլիկիա՝ իր շրջագայության արդյունքները հրապարակելով «Տեղեկագիր Կիլիկիայի և Փոքր Դայի հնագիրական հետքագործությունների» աշխագրանքում: Ուր ամիս նա շրջել է Կիլիկիայում, նկարագրել հայկական հուշարձանները և նրանց վիմական արձանագրությունները՝ կից ֆրանսերեն թարգմանությամբ: Ի դեպ, այդ արձանագրությունների մի զգալի մասի ավերվելը բացապրում է ոչ միայն դարերի կործանարար ազդեցությամբ, այլև նրանով, որ օպար հշխողները երկիրը գրավելու պահից սկսած՝ կործանել են քրիստոնեական հուշարձանների մեծ մասը, որովհետև դրանք նրանց հիշեցնում էին նախկին գերենրին⁶:

² Ա. Դոլոխանյան, Մարի Ֆելիսիքն Բրոստեն հայագետ, 2002, լ. 64-66:

³ Նոյն գլուխում, լ. 68:

⁴ Նոյն գլուխում, լ. 89-90:

⁵ Ա. Դոլոխանյան, Վիկտոր Լանգոլուան հայագետ, Երևան, 2003, լ. 113:

⁶ Նոյն գլուխում, լ. 49:

Գրքի երրորդ գլուխը նվիրված է ֆրանսիացի գիտնականի՝ հայ պատմագրության ասպարեզում ունեցած վասրակին:

Ա. Դոլոխանյանն անդրադառնում է Լանգուայի՝ Մովսես Խորենացուն նվիրված ուսումնասիրությանը, Մմբաւր Գունդարայի ժամանակագրությանը, Գրիգոր Մագիստրոսի 83 թղթերի, Միջայել Ասորու գործերի ֆրանսերեն թարգմանություններին և նրանց գիտական մեկնաբանություններին՝ շեշտելով, որ ֆրանսիացի գիտնականը հայագիտությունը քննում է արևելագիտության ընդհանուր համապատկերում շարունակ համեմատելով հայկական և օպար աղբյուրները⁷:

«Եվրոպացի հայագելքներ» մաքենաշարի չորրորդ գիրքը ֆրանսիացի ականավոր հայեր Էղուարդ Դյուլորիեի մասին է: Իր «Դայերը» ուսումնասիրության մեջ նա համառու ներկայացնում է հայ ժողովրդի պարմությունը՝ սկսած քրիստոնեության ընդունումից: Գրնում է, որ հայերենին հասակակից և հայտնի հին լեզուները դարձել են մնայալ, մինչդեռ հայերնը շարունակում է մնալ կենդանի և համապատասխանաբար զարգանում է պարմության ընթացքի ամեն մի ասդիճանին զուգընթաց⁸:

Այս հետքագործության երկրորդ մասը նվիրված է հայագելքի «Հավաքումն խաչակիրների պարմիչների, հայկական վավերագրեր» գրքի քննությանը: Այն պարունակում է հայ պարմիչների թողած գրեղեկությունները Խաչակրաց արշավանքների վերաբերյալ. «Էղ. Դյուլորիեի՝ Խաչակրաց արշավանքներին վերաբերող հայկական նյութերի ժողովածուն և վերապական հայագիտության մեջ շրջանառության է դրև վիթխարի նյութ»⁹:

Ա. Դոլոխանյանի վերոհիշյալ հետքագործության երկրորդ մասը վերաբերվում է Էղ. Դյուլորիեի՝ «Նայ Եկեղեցուն նվիրված երկերին: Ինչպես գրում է հեղինակը, Նայոց Եկեղեցու պարմությանը անդրադարձել են 19-րդ դարի բոլոր հայագելքները» Ս. Մարտինը, Ս. Բրուսեն, Ֆ. Նոր, Ֆր. Կոնիքերը, Դյուլորիեն: Վերջինս կարառել է մի կարևոր գործ ևս: Նա ֆրանսերեննով ներկայացրել է Նայոց Եկեղեցու վարդապետությունը, ծեսերը, Եկեղեցու յոթ խորհուրդները և կանոնները, նվիրապետությունը, Եկեղեցական հանդերձները¹⁰:

Նայոց Եկեղեցու մասին վերոհիշյալ նյութերու ֆրանսիացի հայագելքը ուսուերենից և հայերենից թարգմանել է ֆրանսերեն և մեկ գրքով երապարակել Փարիզում: Այս գրքի առաջին մասը ներկայացնում է Նայ Եկեղեցու պարմությունը՝ «Նայասրանում քրիստոնեության հասփառության մինչև 19-րդ դարը. մեր Եկեղեցին իրավամբ Արևելքի ամենահին Եկեղեցին համարելով, մեկը նրանցից, որը պահպանել է վաս շրջանի քրիստոնեական շունչը և ավանդները: Դյուլորիեի գրքի երրորդ բաժինը Գրիգոր Լուսավորչի վարդապետության թարգմանությունն է: Ֆրանսիացի հայագելքը համոզված էր, որ այն մեծ կարևորություն ունի, քանի որ վերաբերվում է Արևելքի հնագույն Եկեղեցիներից մեջի պարմությանը և վարդապետությանը¹¹:

⁷ Նոյն գլուխում, լ. 9 114:

⁸ Ա. Դոլոխանյան, Էղուարդ Դյուլորիեն հայագելք, Երևան, 2004, լ. 9 15:

⁹ Նոյն գլուխում, լ. 9 42:

¹⁰ Նոյն գլուխում, լ. 9 43:

¹¹ Նոյն գլուխում, լ. 9 45:

«Էդուարդ Դյուլորիեն հայագեկը» հեքազովության չորրորդ մասում նա ներկայացված է որպես հայ պարմիչների թարգմանիչ և հրապարակիչ: Նրա թարգմանած պարմիչների՝ Միքայել Ասորու, Մարտիրոս Ռուհայեցու, Ստեփաննոս Ասողիկ Տարոննեցու գործերը կադրաված են բարեխնդությամբ և ներկայացնում են խաչակրաց արշավանքների ժամանակահարվածը: Ա. Դյուլոխանյանի բնորոշմամբ՝ «Այս նշանավոր հայագեկը հիացնում է ուկեղարյան գրաքարի լեզվական հարսկությամբ ու կափարելությամբ: Էդ. Դյուլորիեն հայ մարենագրության մեջ գենում է հայոց ցեղի հանճարը և համոզված է, որ այդ հնագոյն մարենագրական գանձերը պիտի պահպանն հայերի ազգային ողին»¹²:

Բանասիրական գիրությունների դոկուոր, պրոֆեսոր Անդրեանի ֆրանսերենի քաջիմացցությունը թույլ է դրվել բնագրերից թարգմանել, մեկնաբանել ու արժենվորել վերոհիշյալ գիրնականների հայագիրությանը վերաբերվող գործերը, որոնք ծնվել են հայ ժողովոյի ու հայ ժաշկույթի և լեզվի նկարմամբ ունեցած սիրուց:

Պրոֆեսոր Անդրեանի «Եվրոպացի հայագեկներ» մարենաշարը կարևոր մի ձեռնարկում է և էականորեն ընդլայնում է հայ ընթերցողների նվազական հայագիրության մասին ըմբռնումները:

¹² Նոյն գիրուում, լ. 70: